

Ամփոփաթեթ

«Միջազգային պայմանագրերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում (փաստաթղթային կոդ՝ Կ-272-27.02.2018-ԱՀ-011/0) կատարված փոփոխությունների վերաբերյալ

N	Առաջարկի (փոփոխության, լրացման) հեղինակը	Նախագիծ, կետը, որին վերաբերում է առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը) ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	2.	3.	4.	5.	6.
1.	ՀՀ կառավարություն	Նախագիծ	Նախագիծը խմբագրվել է Ներկայացված է նախագծում կատարված փոփոխությունների տեղեկանքում	Առաջարկություններն ընդունվել է, հեղինակի կողմից	Ընդունվել է
2.		2. Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասը, 8-րդ հոդվածի 5-րդ մասը, 9-րդ հոդվածի 5-6-րդ մասերը, 23-րդ հոդվածի 2-րդ մասը եւ 24-րդ հոդվածի 5-րդ մասը ենթադրում են նոր իրավական ակտերի ընդունում, ուստի Նախագիծն առաջարկում ենք լրացնել անցումային դրույթներով, որտեղ նշել, թե ինչ ժամկետում են ընդունվելու այդ ակտերը:		Ընդունվել է: Ավելացվել է նոր 26-րդ հոդված:	Ընդունվել է
3.		4. Նախագծի 5-րդ հոդվածի 2-րդ մասի վերջին բառից առաջ կա բաց թողնված բառ:		Ընդունվել է: Նախադասության ավարտը խմբագրվել է:	Ընդունվել է
4.		7. Նախագծի 7-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում եւ 11-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում «անդամ պետությունների» բառերն առաջարկում ենք փոխարինել «սուբյեկտների» բառով, իսկ «այլ պետությունների» բառերը՝ «այլ սուբյեկտների» բառերով՝ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ որպես բազմակողմ միջազգային		Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է

		պայմանագրի սուբյեկտ կարող են հանդես գալ ոչ միայն պետությունները:			
5.		9. Նախագծի 8-րդ գլխի վերնագրի «ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառն առաջարկում ենք փոխարինել «ՄԱՍ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ» բառերով՝ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասը:		Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:	Ընդունվել է
6.		• Նախագծի 9-րդ հոդվածի 5-րդ մասում հանվել են «Հայաստանի Հանրապետության կողմից միանալ նախատեսող միջազգային պայմանագրի» բառերը, իսկ «նախագծի» առաջ ավելացվել են «կամ դրա» բառերը:		Ընդունվել է:	Ընդունվել է
7.		• Նախագծի 26-րդ հոդվածում (Աժ առաջարկով ավելացված հոդված) ավելացվել է 1-ին մաս հետևյալ խմբագրությամբ. «1. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև սույն օրենքի ընդունումը սկսված միջազգային պայմանագրերի հետ կապված ընթացակարգերը չեն վերսկսվում և այդ պայմանագրերի նկատմամբ կիրառվում են սույն օրենքի այն դրույթները, որոնք սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից կարգավորում են համապատասխան փուլի և դրան հաջորդող մյուս փուլերի հետ կապված հարաբերությունները:»		Ընդունվել է:	Ընդունվել է
8.		• Նախագծի 26-րդ հոդվածում (Աժ առաջարկով ավելացված հոդված) ավելացվել է 5-րդ մաս հետևյալ խմբագրությամբ. «5. Սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-2-րդ մասերով սահմանված կարգը գործում է 2019 թվականի հունվարի 1-ից: Մինչ այդ ուժի մեջ մտած միջազգային պայմանագրերը շարունակում են հրատարակվել Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրի» հավելվածը հանդիսացող «Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի պաշտոնական տեղեկագրում»:»		Ընդունվել է:	Ընդունվել է

